Մ. ԳԵՐԾԵՆՋՈՆ

ՋՈ ՊԱՊԻԿԸ

891.ԳԵՐ
Գ - 52

ԳԵՏՀՐԱՏ 1936

ՀԱՅԿ
ՀԵՏՀՐԱՏ

-6 NOV 2011

891.71
9-52

Մ. ԳԵՐՇԵՆԶՈՆ

ՋՈՊԱՊԻԿԸ

Թարգմանեց
Հ. ՀԱՏՐԱՊԵՏՅԱՆ



ՊԵՏՀՐԱՏ — 1936 — ՅԵՐԵՎԱՆ

19 MAR 2015

2969

ՓՈՔՐԱՇԱՍԱԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նկարները՝ Գ. Ալյակրինսկու
Պատ. խմբ. Վ. Սարգսյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

○○○

Գեհերատի տպարան
Գլավլիտ՝ լիազոր Ա. 404, պատվեր 331
Հրատ. 3602, տիրաժ 5000

37059-62



Մեր բակում մի ամերիկացի յե ապրում։ Նա մի փոքրիկ ալեզարդ ծերուկ է, այնքան փոքրիկ, որ հասակը միայն մինչև իմ ուսերիս է հասնում։

Իսկ նա ծնվել է 1861 թվին, Փարիզի կոմունայից տասը տարի առաջ։ Փորձեցեք հաշվել, թե նա քանի տարեկան է։ Ցերևի յերկու անգամ կսխալվեք։

Իսկ յես կարծում եմ, որ նա իսկի յել ամերիկացի չէ։ Ցեթե նա ամերիկայից այստեղ է յեկել քսան տարուց ավելի առաջ, ապա դա չպետք է հաշվել, այնպես չէ։ Ռուսերեն եյ շատ լավ է խոսում, միայն թե ինձ անվանում է «Մայկ» Միխայելի փոխարեն, եյի ասում է «ոլլ ռայտ»՝ «լավի» փոխարեն և ծխամորճ և ծխում։ Ծխամորճ ծխող քիչ կա վոր։ Շուրկան եյ սովորել է նրանից, յեթե մի բան է պատահում, ասում է «ոլլ ռայտ»։ Իսկ մենք նրան Զո պապիկ ենք կանչում։

Ցես ու նա շատ լավ բարեկամ ենք։

Նա իհարկե, վոչ մի տեղ չի ծառայում, կենսաթոշակ է ստանում։ Ցերը յեղանակը տաք է, նա ամբողջ որը նստում է բակում արևի տակ և՛ ծխում է և՛ պատմում մեզ, թե ինչպես պետք է ձիավոր հովիվ և հնդկացիներ խաղալ։ Նա ինքը, մենակ, փողոցում մանգալ վախենում է. իհարկե այդպիսի թույլ մարդուն կհրեն, վայր կգցեն։

Ցես ու Շուրկան միշտ ուղեկցում ենք նրան, յերբ նա գնում է փոստը կենսաթոշակ ստանալու։ Իսկ Փարիզյան կոմունայի որը նա մեզ խնդրեց, վոր իրեն տանենք հեղափոխության վաստակավոր գործիչների Տունը։

Գնացինք։ Վողջ դահլիճը լիքն եր ծերուկներով։ Հիսուն տարեկանից պակաս մարդն այնտեղ համարվում է վորպես կոմյերիտական։ Իսկ նախագահության մեջ, սեղանի շուրջը նստած եյին իսկական Փարիզի կոմունարները։ Զեմ հիշում, հինգ հոգի եյին, թե վեց։ Մի, դեռևս ամուր ծերունի, վեր կացավ և սկսեց պատմել հրացանաձգության, բարիկադների մասին, և թե ինչպես եյին նրանց գնդակահարում վերսալցիները։

— Ցես,— ասում է, - այն ժամանակ տասնհինգ տարեկան եյի։ Ինձ, իհարկե, մայրիկս չեր թողնում, վոր փողոց դուրս գամ, դուռը բանալիով փակել եր։ Բայց ես պատուհանից չարդախը բարձրացա, այնտեղից ել ես պատուհանից չարդախը բարձրացա, այնտեղից ել յես ինքը։ Առաջին գործս այն յեղավ, վոր գնացի փընտռելու ուսուցչուհուս՝ Լուիզա Միշելին։ Ցես նրան գտա բարիկադի վրա։ «Շուտով փամփուշտ բեր»,—ասաց նա ինձ։

Զո պապիկը նստած եր առաջին կարգում, իսկ ես ու Շուրկան՝ ամենից յետևի նստարանի վրա, վորովհետև առջևում նստելը մեզ համար անհարմար եր։

Ցերեկույթն ուշ վերջացավ, իսկ յերբ փողոց դուրս յեկանք, սաստիկ անձրև եր գալիս։

—Շուտ, շուտ, ահա մեր տրամվայը,—գոչեց Շուրան։

Բայց Զո պապիկն ուզում եր վոտով գնալ։

—Անձրևը տաք անձրև է, մայ բոյ (սա նշանակում է — «իմ տղա»), ինձ համար հաճելի յե վոտով գնալ և վերհիշել անցած որերը,—պատասխանեց Զո պապիկը։

Մինչև տուն հասանք, նա բոլորովին թրջվեց։

—Տես, չմրսես, պապիկ, դու հեշտությամբ կհիվանդանաս,—ասացի յես նրանից բաժանվելիս։

—Վոչինչ, Մայկ, յես առողջ ծերուկ եմ,—ժպտաց նա։—Սո լոնգ (սա նշանակում է—«մնաք բարով»)։

Մյուս որը մենք կոլեկտիվի խորհրդի նիստ ունեյինք, ուշ վերադարձանք տուն, պապիկի մոտ գնալ չկարողացանք։ Իսկ հետևյալ որը հանգստի որ եր, արեգակը գարնան արեգակի պես տաքացնում եր։ Մենք խաղում եյինք բակում։

—Զո պապիկը չի յերևում,—նկատեցի յես։—Չի՞ հիվանդացել արդյոք անձրևից հետո։

Մենք վազեցինք և նրա սենյակի դուռը ծեծեցինք։

Ծերուկն առողջ եր։ Նա նստել եր հատակին, իր ամերիկական ճամբրուկի մոտ և ինչ վոր թղթեր եր քրքրում։

—Գուդ մորնինգ, կոմրեյդս (բարի լույս, ընկերներ),—ասաց նա, աչքերը մեզ վրա ուղղելով։—Ինչպե՞ս եք, իմ փոքրիկ բարեկամներ։

—Ցերեկ մենք կոլեկտիվի խորհրդի նիստ ունեյինք,—վրա տվեց Շուրան։—Ուզում եյին վտարել Սերգեյին, վորովհետև նա ակումբից զարթուցիչ ժամացույց է գողացել, իսկ Սերգեյը յեկավ խորհուրդ և բերեց իր պատրաստած զսպանակով լարվող ավտոմոբիլը։ Հենց վոր զսպանակը լարում ես, ավտոմոբիլը 15 մետր վազում է։ Սա համենայն դեպս գյուտարարություն է։ Ցերեխաներից մի քանիսը պաշտպանեցին, վոր նրան ներեն, վորովհետև, ճիշտ վոր նա զսպանակի և ժանանիվի կարիք ուներ։

Իսկ Զո պապիկը չլսեց, թե ինչ է ասում Շուրկան։ Նա միշտ մեր գործերով շատ էր հետաքրքրվում։ Այս անգամ կարծես թե մոռացել էր, վոր մենք նստած ենք սենյակում։ Ծրարը վերցնում էր, միջից նամակ հանում, կարդում և կրկին տեղը դնում։ Վերցնում լրագիրը, գտնում կարմիր մատիտով գծված հոդվածը, նայում, նայում ու ելի ճամբրուկը քրքրում։ Ամբողջ ժամանակ ել ծխում էր, իսկ աչքերը կարմիր էլին, կարծես թե լաց էր յեղել կամ ծուխն էր տվել աչքերին։

Անգործ նստելուց Շուրկան ձանձրացավ։



— Գնանք, Միշկա, — ասաց նա ինձ։

Բայց այդ ժամանակ Զո պապիկը ճամբրուկից մի նկար հանեց։

— Դե, յերեխաներ, այս նկարում վորոնեցեք Զո պապիկին։

Այդ նկարը, յերևի կտրված էր վորևե թերթից կամ ամսագրից։ Ծիծաղելի գլխարկներ ծածկած մարդիկ շարքերով առաջ էլին գնում, իսկ առջևում կանգնած էլին կանայք, հին ձևի շորեր հագած և նրանցից մեկը մի տղամարդու մի յերեխա յեր մեկնել։

— Միթե կարելի յե այստեղ գտնել ձեզ, — ծիծաղեց Շուրկան։ — Այստեղ բոլորն ել մեծ քեռիներ են։ Բա գլխարկները։ Նայիր, Միշկա, իսկ և իսկ կաթսայի նման են։

— Վոչ, Զո պապիկ, — ասացի յես, — այստեղ քեզ նման մեկն ել չկա։ Յերևի սա շատ հին նկար է։

— Հին է, ճիշտ է, Մայկ, — ժպտաց Զո պապիկը։ — Ա՛յ, նայեցեք. այստեղ աջ կողմից առաջինը, ամենածայրին, ձեր Զո պապիկն է։ Դա հազար ութ հարյուր ինն սուն թվի Մայիսի մեկին էր։

— Հազար ութ հարյուր ինն սուն թվին, — բացականչեց Շուրկան։ — Քառասուն հինգ տարի առաջ։ Միթե այն ժամանակ Մայիսի մեկը տոնում էլին։

— Տղաս, դա ամենաառաջին Մայիսի մեկն էր։

Մենք ուշադրությամբ նայեցինք նկարին։ Ինչ բարձրահասակ և ուժեղ էր այն ժամանակ Զո պապիկը։ Յերևի նա ծերությունից թոռոմել է։

— Բայց սա ինչ քեռի յե, վոր բռնել է յերեխային։

— Դա իմ ամենալավ բարեկամն է, Պարկերը։ Կինը յեկել էր նրան մնաս բարով ասելու. վախենում էր, վոր պոլիցիան կսկսի կրակել։

— Իսկ նա այժմ վորտեղ է, — Զո պապիկ։

Ծերունին վոչինչ չպատասխանեց, միայն ուսերը վեր քաշեց։ Նա շարունակեց թղթերը քրքրել։ Այժմ մենք նրա ձեռքերից աչքներս չեյինք հեռացնում։ Նա գտավ մի կտոր կարմիր մետաքս, վորի վրա գրված էլին հետևյալ տառերը։ IWW:

— Սա «Վոբբլի» նշանն է, — բացատրեց պապիկը։ — Մի ժամանակ այդպես էր կոչվում Ամերիկայում բանվորական հեղափոխական միությունը։

Հետո նա հանեց մի տրորված, դեղնած լրագրի կտոր։ Նրա վրա մի սարսափելի նկար կար։ Զորս խա-

լաթ հագած բանտարկյալ կանգնած էլին կախաղանի տակ և յուրաքանչյուրի մոտ մի հանգույց էր ճոճվում։

— Այս ինչ է, Պապիկ։

— Սա Սպայսն է, սա Ֆիշերն ու Ենգելը, իսկ սա... ինչ էր նրա անունը։

Պապիկը յերկար ժամանակ ճակատը տրորեց, հետո ասաց.

— Չեմ հիշում, յերեխաներ, վոչ մի կերպ չեմ հիշում։ Տեսեք յերեխաներ, ինչ վիրավորական է, մայ բոյս (իմ տղաներ). գործարանում կողք-կողքի էլինք կանգնում, մի կտոր հացն իրար մեջ բաժանում էլինք, իսկ յես մոռացել եմ, բոլորը մոռացել եմ, ոլդ ֆուլ (ոլդ ֆուլ նշանակում է «հիմար ծերուկ»։ Յերբ Պապիկն իր վրա շատ էր բարկանում, այսպես էր հայհոյում իրեն)։

Յես ուզում էլի հարցնել, թե ինչու նրան կախեցին, բայց վախեցա, վոր պապիկն այդ էլ մոռացած լինի։ Սակայն Շուրկան չկարողացավ համբերել։

— Իսկ նրանց ինչու համար կախեցին, Զո պապիկ։

— Ռումբի համար։ Միայն թե այդ ճշմարիտ չէ, տղաներ, նրանք ռումբ չէլին նետել։ Նրանք, ինչպես յես, ինչպես ուրիշները, գնում էլին Մայիսի 1-ի տոնին մասնակցելու։

— Հազար ուլթ հարյուր իննսուն թվին։

— Վոչ, կարծեմ քիչ առաջ էր։

Պապիկը ճակատը կնճռոտեց և աչքերը ձեռքերով ծածկելով, նստեց։ Նա յերկար, շատ յերկար նստեց և հանկարծ տեսա, վոր նրա մատների արանքից արտասուք է հոսում։

— Պապիկ, Զո պապիկ,— կանչեցի յես։

Նա ձեռքերը յերեսից հեռացրեց։ Արտասուքները հոսում էլին նրա կնճիռների միջով։ Նա տխրությամբ գլուխը թափ տվեց.



— Բոլորը, բոլորը մոռացել եմ, կտորներ եմ հիշում. Մակ-Կորմիկի գործարանում գործադուլ է, խեյմարկետակվեր, ռումբ, Մայիսի մեկը... Այդ յոթը եր, Մայիսի մեկը, Մայիսի մեկը, — հետո, թե առաջ։ Սպայս, Ֆիշեր, Ենգել, իսկ չորրորդի անունն ինչ եր։ Բոլորը, բոլորը մոռացել եմ, ոլդ ֆուլ։

Նա ձեռքը դրեց ուսիս։

— Այդպես, Մայկ։ Լսել ես, թե ինչպես են կոմունարները։ Ամեն րոպե հիշում են։ Ինչու չես չեմ հիշում, մշուշ է իմ ծեր գլխի մեջ։ Զո Պապիկի մեռնելու ժամանակն է։ Ել վոչ մի բանի պետք չե։ Սպայս, Ֆիշեր, Ենգել... Ինչպես է նրա անունը։ Մակ-Կորմիկի մոտ միասին ելինք աշխատում։ Թե Պիտերս է, Պիտերս չե, թե Ադամս է, Ադամս չե։ Լաբսոն։ Չե, Լարսոն ել չե։

Նա նորից յերեսն ափերի մեջ առավ ու լռեց։

Մենք սենյակից կամաց դուրս յեկանք։

Այդ որվանից Զո պապիկը բոլորովին փոխվեց։ Առաջ ելի ծիծաղում եր, մեզ հետ յերգեր եր յերգում։ Իսկ այժմ բոլորովին տխուր եր։ Նստում եր բակի նստարանի վրա ու լռում։ Աչքերը գցում եր վորևե թիթեղյա տուփի կամ սրվակի վրա ու չեր շարժվում։ Մեզ ել չեր նկատում։ Միայն մի անգամ յերեկոյան, յերբ յես ոգնում ելի նրան, վոր վեր կենա, վորովհետև վոտներն ուռել ելին, նա կրկին ասաց ինձ.

— Շուտով «մնաս բարով» պիտի ասես ինձ, Մայկ։ Յերբ ծեր մարդը հիշողությունը կորցնում է, պետք է դագաղի մեջ դնել։ Ծեր մարդն ամեն որ իր հին կյանքն է ապրում։ Յեթե մոռացար — ձանձրալի յե, բոլորովին չի կարելի ապրել, մայ բոյ։ Զո պապիկը շուտով պետք է մեռնի։

Շուրկան թերթերի կրպակում գտավ մի կույտ ամերիկական թերթեր։ Մենք մեր ծնողներից փող խնդրեցինք, թերթերը գնեցինք և բերինք տվինք Զո պապիկին։ Կամաց, այնպես վոր նա չնկատի, մենք մտանք նրա սենյակը և թերթերը դրինք սեղանի վրա։

Մյուս առավոտ նա բակը դուրս յեկավ, ձեռքին մի ամերիկական թերթ։— Շնորհակալ եմ, յերեխաներ, — ասաց նա ժպտալով։ — Զոն շատ ուրախ է։ Շատ ուրախ է, լավ ընծա յե։ Շնորհակալ եմ, մայ բոյս։

Նա լրագիրը բաց արավ և սկսեց կարդալ։

Կես ժամից հետո Շուրկան մեր պատուհանը ծեծեց։ Յես բակը վազեցի։

Զո պապիկը, աչքը մի տողի վրա հառած, անշարժ, նստած եր։

— Նա չի կարդում, — շշնջաց Շուրկան։ — Հենց այնպես նստած է։

Մենք դպրոցական պարապմունքներ չունեցինք, վորովհետև մինչև ապրելի մեկը մեզ արձակել ելին։ Բայց յես գիտեի, վոր Ստեփան Պետրովիչը, վորը մեզ հասարակագիտություն եր դաս տալիս, այդ որերին վոչ մի տեղ չեր գնացել։

— Սպասիր, — ասացի յես Շուրկային։ — Յես մի բան եմ մտածել։

Յես վազեցի Ստեփան Պետրովիչի մոտ։

Նա շատ զարմացավ, յերբ յես նրան պատմեցի, թե ինչու համար եմ յեկել։ — Այդպես, այդպես, — ասաց նա։ — Ուրեմն դու այնպիսի գրքեր ես ուզում, վորոնց մեջ լինի Մայիսի մեկի մասին։ Պետք է փնտռել Ամերիկայի բանվորական շարժման պատմության մեջ։

Նա նայեց դարակի գրքերը, հետո բաց արավ բաղմոցը, վորը բերնե-բերան գրքերով լիքն եր։

— Վերցրու այս և այս։ Միայն թե այդ գրքերը շատ բարդ են գրված, դժվար կհասկանաս։ Ասենք... յեթե լավ ուշադիր լինես... դե, նայիր, միայն թե չկորցնես. այդ գրքերը դժվար են ճարվում։

Ցես խնամքով գրքերը վաթաթեցի լրագրի մեջ։ Յերեք գիրք։ Մեկի վրա հաստ տառերով տպված եր IWW — հենց այն տառերը, որ յես ու Շուրկան տեսանք Զո պապիկի մոտ կարմիր մետաքսի կտորի վրա։

Գնդակի արագությամբ թռա տուն։

Կանգ առ, ասացի Շուրկային, որը գալիս եր դիմացից։ Հիմա ամեն ինչ լավ կլինի։

Զո պապիկն ելի նստել եր լրագիրը ձեռքին, ինչպես յերկու ժամ առաջ։ Նա ննջել եր, ծխամորճը ձեռքից վայր եր ընկել։

Մենք կամաց մոտիցն անցանք և մտանք նրա սենյակը։

— Դե, ասա, ինչ ես մտածել, — հարցրեց Շուրկան։

Ցես թուղթը բաց արի և յերեք գիրքն ել դրի սեղանի վրա։ Իսկ այն գիրքը, որի վրա կային IWW տառերը, դրի ամենից վերև, որ յերբ Զո պապիկը տուն գա, իսկույն նկատի։

Մենք ինարկե, պատուհանից նայում եյինք։ Իզուր չեր, որ այդ յերեկո նա ժամի 12-ին լույսը մարեց — չե՞ որ նա միշտ ժամի իններին եր պառկում քնելու։ Նա մի յերես կարդաց և մյուս յերեսը շուռ տալուց առաջ, յերկար ժամանակ նստած մտածում եր առաստաղին նայելով։ Մենք նրա յերեսը չեյինք տեսնում, բայց յես համոզված եյի, որ նա ժպտում է։

Իսկ առավոտյան նա դուրս յեկավ առաջվա ուրախ ժպիտը յերեսին։ — Հելլո, բոյս։ — կանչեց նա մեզ։ — Հաու դու յու դու (սա նշանակում է «քեֆներդ ինչպես է»)։ Լավ է։ Ոլլ ռայտ, յես ել լավ եմ։ Ինչպիսի տաք յեղանակ է, միանգամայն ամառ։ Հա, յես հիշեցի, թե ինչպես է այն տղայի անունը, — Պարսոնս։ Ծիծաղելի յե։ ինչպես կարող եյի մոռանալ։ Միասին ենք աշխատել, միասին հացի չորուկ կերել... Պարսոնս ինարկե, Պարսոնս։ Շատ լավ տղա յեր Պարսոնը։

Այդ որը նա ել վոչինչ չասաց. նստել եր, Մուրկա կապվին առել ծնկներին ու խառուտ եր տալիս նրա վիզն ու կզակը։ Իսկ փիսիկն աչքերը կկոցում եր ու մրոմռում։

— Մեր ծերունին առողջացավ, — աչքով արավ ինձ Շուրկան։

Ելի յերկու որ անցավ։

Մենք Զո պապիկի հետ գնացինք փոստը։ Նա իր կենսաթոշակն ստացավ և խորհրդավոր ձևով ասաց մեզ.

— Դե՛, տղաներ, դուք այստեղ ինձ սպասեցեք։ Վո՛չ մի տեղ չգնաք։

Նա մտավ համավաճառանոցը։ Քիչ հետո դուրս յեկավ այնտեղից ձեռքին թղթի մեջ փաթաթված իրեր և միրուքը հպարտորեն վեր ցցած, ճանապարհվեց դեպի տուն։

Բակում նա կանգ առավ ձյունի կույտի տակից վազող առվակի մոտ, կապույտ ու կարմիր գույնով ներկված շոգենավի վրայից թուղթը պոկեց և մատով ջուրը ցույց տալով, ասաց.

— Դուք կարմիր նավատորմիղային կլինեք, մալբոյս։

Զո պապիկը մոռացել եր, վոր յերկու տարի յե անցել այն որից, ինչ մենք տարվել եյինք այդ զվարճանքով։ Այժմ մեզ համար միանգամայն ձանձրալի յեր մի թեյի գդալ ջրի մեջ շոգենավիկներ գցելը։ Մենք ել փոքրիկ չեյինք։ Բայց մենք համբերությամբ ձյունի կույտի մոտ նավը ջրի մեջ եյինք գցում և ասֆալտի վրայով հրում մինչև դարպասը։ Իսկ ծերունին նայում եր մեզ վրա, ուրախ աչքերը կկոցում, միայն թե փիսիկի նման չեր մռմռում։

— Դե՛, Զո պապիկ, — ասաց Շուրկան, յերբ այդ զբաղմունքը մեզ վերջնականապես ձանձրացրեց, — դուք ուզում եյիք պատմել այն նկարի մասին։

— Վո՞ր նկարի մասին, — հարցրեց ծերունին։

— Այն նկարի մասին, վորի վրա նկարված են կալանավորներ Սպայսը, Ֆիշերը, Ենգելը...

— Յեվ Պարսոնսը, — վերջացրեց Զո պապիկը։ — Կը պատմեմ, յեթե դուք կոգնեք ինձ, վոր ճաշ պատրաստեմ։

Հարյուր տարվա մեջ մի անգամ եր մեզ Զո պապիկն այդ բավականությունը պատճառում. մենք կարտոֆիլ եյինք տապակում, կաղամբապուր յեփում, հետո միասին ճաշում։ Շուրկան իր մասնագիտությունն ուներ. կանգնել նավթավառ մեքենայի մոտ, պատրույգները բարձրացնել ու իջեցնել, խառնել կաթսայի ապուրը կամ թավայի տապակածը։ Իսկ յես, Զո պապիկի հետ, չորս ձեռքով կարտոֆիլ եյինք մաքրում։

— Յես սխալ ասացի, վոր առաջին Մայիսի մեկը հազար ութ հարյուր ինոսուն թվին եր, — ասաց պապիկը, յերբ ամեն մեկս սկսեցինք մեր գործն անել։ — Առաջին Մայիսի մեկն առաջ եր — հազար ութ հարյուր ութսուն վեց թվին։ Շատ լավ հիշում եմ։ Այդ ժամանակ յես և Պերսոնսն աշխատում եյինք Չիկագոյում, Մակ-Կորմիկի գյուղատնտեսական մեքենաների գործարանում։

— Հնձող մեքենայի մասերն իրար միացնող վարպետի աշակերտ եյի։ Այդ ժամանակ Ամերիկայի բանվորներն սկսեցին ամեն տեղ միություններ հիմնել։ Լավ լվա կարտոֆիլը, Մայկ։ Մենք պահանջում եյինք եյտ հաուր դեյ — այսինքն որական ութ ժամ աշխատանք, վո՛չ ավելի։ Այն ժամանակ վորոշեցինք, վոր հազար ութ հարյուր ութսուն վեց թվի Մայիսի մեկին Ամերիկայում վոչ վոք չաշխատի, գործադուլ անեն եյտ հաուր դեյի համար։ Մենք այդ որը Չիկագոյում գործարան չգնացինք, մյուս մեծ քաղաքներում ել։ Յեվ դա առաջին, առաջին միտինգն եր։ Պերսոնսն ինձ ասաց. «Զո, վաղը դու արի միտինգի, դու ել, մյուսն ել. խառատն ել, մեքենա-

գետն ել»... Մենք գնացինք, բայց պոլիցիան կրակ բաց արավ։ Ցես մի մեծ քար վերցրի և խփեցի վոստիկանին։ Իմ ձեռքը վիրավորեցին, ահա...

Զո պապիկը կարտոֆիլը դրեց ամանի մեջ, թևերը քշտեց արմունկից վերև։ Նիհար ձեռքի վրա մի սպիտակ սպի կար, վորդի նման։— Շատերին ել սպանեցին։ Այն ժամանակ մենք մյուս որը Խեյ-մարկետ զբոսապուրակում, Խոտի հրապարակում միտինգ կազմակերպեցինք։ Շատ ու շատ բանվորներ կային, ամբողջ Չիկագոն։ Պոլիցիան առաջ գնաց և մեկը նրանց մեջ ռումբ գցեց։ Ռումբը մի վոստիկան սպանեց։ Ցես գիտեմ. ռումբը Պարսոնսը չի գցել, Ֆիշերն ել չի գցել, Ենգելն ու Սպայան ել չեն գցել։ Իսկ ո՞վ է գցել։ Կարելի չե մի դավաճան։ Այո, իհարկե, դավաճան։ Նրան ուղարկել էլին կապիտալիստները, մեր միտինգը կործանելու համար, մեր բանվորական միությունը կործանելու համար։

Զո պապիկը մաքի մեջ ընկավ։ Շուրկան կարտոֆիլը դրեց կրակի վրա և մենք նստեցինք սեղանի շուրջը։

— Ծովատառեխը թղթի վրա մաքրիր, մայ բոյ։ Նրան կախեցին — Պարսոնսին, հիշում եմ, Ալբերտ Պարսոնսին և Ավգուստ Սպայսին և Ֆիշերին — նրա անունն Ադոլֆ եր, և Ենգելին։ Ենգելն իմ անվանակիցն եր, տղաներ, մենք միասին գնում էլինք ձուկ վորսալու։ Մի անգամ մի հին կոշիկ վորսացինք։ Մակ-Կորմիկում մեզ սկսեցին անվանել «Զո և Զո, հին կոշիկների ընկերություն»։ Իսկ դուք ասում եք, թե մոռացել եմ, մայ բոյս։

— Իսկ ինչո՞ւ ասացիր, վոր առաջին Մայիսի մեկը հազար ութ հարյուր իննսուն թվին եր,— հարցրեցի ես Զո պապիկին։

— Վորովհետև ամբողջ աշխարհի համար այդ տոնն առաջին անգամ հազար ութ հարյուր իննսուն թվին եր, — պատասխանեց ծերունին։— Հասկանում ես, մայ բոյ,

ամբողջ աշխարհի համար, բոլոր յերկրներում, ուր բանվորներ կան։

Նա յերեսը շուռ տվեց դեպի պատուհանի ներքնատախտակը, ուր սովորաբար գտնվում եր նրա ծխամորճը։

— Մայկ, դու չտեսար, թե ուր դրեցի իմ ծխամորճը։

Յես ու Շուրկան ծիծաղից թուլացանք. ծխամորճը նրա ձախ ձեռքին եր։

— Ծխամորճը ձեր ձեռքին է, — միաբերան բացականչեցինք մենք։

Ջո պապիկը հանցավորի պես ծիծաղեց։ — Ո՛լդ ֆուլ։ Մայիսի մեկն ել այդպես ձեռքիս բռնել եյի, բայց գըտնել չեյի կարողանում։ Այդ դու՞ յես գրքեր բերել, Մայկ։ Շնորհակալ եմ, մայ բոյ, շատ, շատ շնորհակալ եմ։ Մայիսի մեկին յես պետք է քայլեմ ձեզ հետ միասին, առաջին, շարքում։

Յեվ մենք նստեցինք կարտոֆիլ ուտելու։

ՀՀ Ազգային գրադարան
NL0390478

380

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

2969

М. ГЕРШЕНЗОН

ДЕДУШКА ДЖО

На армянском языке

Госиздат ССР Армении
Эривань, 1936 г.